**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 05/02.33/1433-2026**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավանեսյան,

Խնդրում եմ ապահովել ս.թ սեպտեմբերի 12-ին կայացած ՏՀԿԽ նիստի 3-րդ հարցի (Թվային գործելակարգերի էլեկտրոնային գործիքի մոդուլի և ապահովագրության ռեգիստրի ներկայացում) ԽԱ21-2025 արձանագրության 3.1 հանձնարարականի կատարումը՝ «Հավանություն տալ համակարգի շահագործմանը, կրկին հարցին անդրադառնալ երկշաբաթյա ժամկետում՝ քննարկելու տեխնիկական և բովանդակային հագեցվածության բացերի, բուժհաստատությունների արագընթաց ինտերնետ կապի ապահովման և բուժաշխատողների ուսուցման կազմակերպման հարցերը»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ տեղեկանքով ներկայացնել Թվային գործելակարգերի էլեկտրոնային գործիքի մոդուլի և ապահովագրության ռեգիստրի համակարգի առկա բացերը՝ վիճակագրությամբ և լուծման ճանապարհները, այդ թվում՝

- Գնահատել՝ արդյոք բոլոր բժշկական կենտրոններում առկա են պլանշետների ինտեգրման համար անհրաժեշտ տեխնիկական պայմաններ, այդ թվում՝ հուսալի ինտերնետ կապի հասանելիություն:
- Պետք է սահմանվեն համապատասխան ծառայությունների վայրերը և մասնագիտական դերերը, որոնց համար անհրաժեշտ են դինամիկ տվյալների մուտքագրման բջջային սարքեր՝ դուրս բերելով մասնագետների, նրանց դերերի, բժշկական կենտրոնների և դրանց բաժանմունքների քանակը և ցանկը:
- Անհրաժեշտ է գնահատել բժշկական անձնակազմի պլանշետների օգտագործման հմտությունները և սահմանել կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և մեխանիզմները:

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ**
**ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

X ____________________

Հարգանքով՝

Կատարող՝ Էլեն Մանուկյան
Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի ռեֆերենտ
Հեռ. 515702